

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ կետով՝

«13) Ստուգման ընթացքում ի հայտ եկած հետևյալ հանգամանքների մասին նշումներ՝

ա. հանգամանքներ, որոնք ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին (անձանց) հիմք են տալիս ենթադրելու, որ օտարերկրյա պետությունում տեղի է ունեցել հարկի գումարի թերհայտարարագրում և/կամ թերվճարում.

բ. հարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացած հարկի նվազեցման կամ հարկից ազատման հանգամանքներ, որոնք ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին (անձանց) հիմք են տալիս ենթադրելու, որ օտարերկրյա պետությունում պետք է առաջացնեն վճարման ենթակա հարկի գումարի կամ հարկային պարտավորության ավելացում.

գ. օտարերկրյա տնտեսվարող սուբյեկտի հետ հարկ վճարողի գործարք(ներ)ն իրականացվել են մեկ կամ ավել օտարերկրյա պետությունների սուբյեկտների միջոցով, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա տնտեսվարող սուբյեկտի ռեզիդենտության պետությունում, կամ երկու պետություններում էլ, առաջանում է հարկային պարտավորությունների կրճատում.

դ. հանգամանքներ, որոնք ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին (անձանց) հիմք են տալիս ենթադրելու, որ հարկային պարտավորությունների կրճատումը առաջացել է փոխկապակցված ձեռնարկությունների միջև շահույթի արհեստական տեղափոխումից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: